

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
РЕСПУБЛИКА АРЦАХ
THE REPUBLIC OF ARTSAKH

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ
ВЕСТНИК УНИВЕРСИТЕТА МЕСРОП МАШТОЦ
MESROP MASHTOTS UNIVERSITY BULLETIN

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴԿԱԾՆԵՐԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԺՈՂՈԿԱԾՈՒ

Հրատարակվում է Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց Համալսարանի և Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդների որոշմամբ:
Հրատարակվում է 2006 թվականից:

Публикуется по решению ученых советов Университета Месроп Маштоц г.Степанакерта и Ереванского государственного университета.
Издается с 2006 года.

It is approved by Stepanakert Mesrop Mashtots University and Yerevan State University Science Councils.
It is published since 2006.

Մեսրոպ Մաշտոց Համալսարանի Լրատու: Գիտական հոդվածների պարբերական ժողովածու:
«Լիմուշ» հրատարակչություն, 2018 թ., 520 էջ:

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ Վարդանյան Արարատ, պատմ.գիտ.թեկ., դոցենտ
ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Մարգարյան Լուսինե, բան.գիտ.թեկ., դոցենտ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Նախագահ՝

Աթոյան Կոլյուն
Աղաջանյան Սերգեյ
Աղասյան Արարատ

Ավետիսյան Պավել

Ավետիսյան Հայկ

Խանյան Սուկրատ

Հայրապետյան Էլենորա
Հովհաննիսյան Լավրենտի
Պարախանյան Լուսինե

Մինասյան Էդիկ

Միրզախանյան Ռուբեն
Միրզոյան Լավրենտի
Մկրտչյան Արթուր

Ծաղիկյան Ստեփան

Պետիկյան Սիրանուշ
Պետրոսյան Գեղամ

Պետրոսյան Վահրամ

Սաֆրաստյան Ռուբեն

Գաբրիելյան Ղոնարա

ՄՄՀ ռեկտոր, մանկ. գիտ.թեկ., դոցենտ

ՀՊՏՀ ռեկտոր, տնտ. գիտ. դոկ., պրոֆեսոր

ԲՈՀ-ի հասարակական գիտ. բաժնի վարիչ, բ.գ.դ., պրոֆեսոր

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն, պատմ. գիտ. դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնի վարիչ, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԱրՊՀ զրականության և լրագրության ամբիոնի պրոֆեսոր, բան. գիտ. դոկտոր

ՄՄՀ պրոռեկտոր, մանկ. գիտ.թեկ., դոցենտ

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

ԱրՊՀ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դոցենտ, հոգ. գիտ.թեկ.

ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, պատմ. գիտ.դոկտոր, պրոֆեսոր

ՀՊՄՀ ռեկտոր, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՀՃՇԱՀ, մանկ. գիտ.թեկ., դոցենտ

ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան, փիլիսոփ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՀՌՀ քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի վարիչ, իրավ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր.

ՄՄՀ իրավագիտության ամբիոնի դասախոս, ի.գ.թ.

ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակ-ի դեկան, պատմ. գիտ.դոկտոր, պրոֆեսոր

ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի վարիչ, ԵՊՀ ՀՀԻ հայ-քրդական առնչությունների բաժնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն,

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

ГЛАВНЫЙ РЕДАКТОР
ЗАМЕСТИТЕЛЬ ГЛАВНОГО РЕДАКТОРА

Варданыя Арарат, к.и.н., доцент
Маркарян Лусинэ, к.ф.н., доцент

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ:

Председатель: **Габриелян Донара**
Ректор УММ, к.п.н., доцент

Агасян Арарат	Директор Института искусств НАН РА, д. искусств.н., профессор
Аветисян Павел	Директор Института археологии и этнографии НАН РА, член-корреспондент НАН РА
Аветисян Гайк	Зав.кафедрой археологии и этнографии ЕГУ, д.и.н., профессор
Атоян Кориюн	Ректор АГЭУ, д.э.н., профессор
Айрапетян Элеонора	Проректор УММ, к.п.н., доцент
Агаджанян Сергей	Начальник отдела общественных наук ВАК, д.ф.н., профессор
Караханян Лусине	Кафедра педагогики и психологии АрГУ, к.псх. н., доцент
Минасян Эдик	Декан факультета истории ЕГУ, д.и.н., профессор
Мирзаханян Рубен	Ректор АГПУ, д.и.н., профессор
Мирзоян Лаврентий	НУАСА, к.п.н., доцент
Мкртчян Артур	Декан факультета социологии ЕГУ, д.филос.н., профессор
Оганесян Лаврентий	Член-корреспондент НАН РА
Петикян Сирануш	Преподаватель кафедры правоведения УММ, к.ю.н.
Петросян Ваграм	Зав.кафедрой международных отношений и дипломатии ЕГУ, руководитель отдела армяно-курдских отношений ИАИ, к.и.н., доцент
Петросян Гегам	Декан факультета международных отношений ЕГУ, д.и.н., профессор
Сафрастян Рубен	Директор Института Востоковедения НАН РА, Академик НАН РА
Цагикян Степан	Зав.кафедрой уголовного права и уголовно-процессуального права РАУ, д.ю.н., профессор
Ханян Сократ	Профессор кафедры литературы и журналистики АрГУ, д.ф.н.

EDITOR-IN-CHIEF
DEPUTY EDITOR-IN-CHIEF

Ararat Vardanyan, Candidate of Historical Sciences, Docent
Lusine Margaryan, Candidate of Philology, Docent

EDITORIAL BOARD

Chairman: **Donara Gabrielyan**
MMU Rector, Candidate of Pedagogic Sciences, Docent

Ararat Aghasyan	Director of Institute of Arts of NAS RA, Candidate of Art Criticism
Koryun Atoyan	Rector of ASUE, Doctor of Economic Sciences, Professor
Pavel Avetisyan	Director of Institute of Archaeology and Ethnography of NAS RA, Correspondent member of NAS RA
Hayk Avetisyan	Head of Chair of YSU Archeology and Ethnography, Doctor of Historical Sciences, Professor
Sergey Aghadjanyan	Head of the Division of Social Sciences of SCC RA, Doctor of Philology, Professor
Eleonora Hayrapetyan	MMU Vice Rector, Candidate of Pedagogic Sciences, Docent
Lavrenti Hovhannisyan	Correspondent member of NAS RA
Sokrat Khanyan	Professor Chair of ASU Literature and Journalism, Doctor of Philology
Lusine Gharakhanyan	ASU Pedagogy and Psychology Chair, Candidate of Psychological Sciences, Docent
Edik Minasyan	Dean of the YSU Faculty of History, Doctor of Historical Sciences, Professor
Ruben Mirzakhanyan	ASPU Rector, Doctor of Historical Sciences, Professor
Lavrenti Mirzoyan	NUACA, Candidate of Pedagogy, Associate Professor
Artur Mkrтчyan	YSU Sociology Faculty Dean, Doctor of Philosophy, Professor
Siranush Petikyan	MMU, Ph.D in Law
Gegham Petrosyan	Dean of the Faculty of International Relations, Doctor of Historical Sciences, Professor
Vahram Petrosyan	Head of the Chair of International Relations and Diplomacy, Head of the Department of Armenian - Kurdish Relations of IAS, YSU, Candidate of History, Associate Professor
Ruben Safrastyan	Director of NAS RA Institute of Oriental Studies, NAS RA Academician
Stepan Tsaghikyan	Head of RAU Criminal Law and Criminal Procedure Law Chair, Doctor of Law, Professor

ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՆԵՐԳՐԱԿՎՈՒՄԸ՝
ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՏԵՍԱԿ՝
(ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ)

Առնակ Սարգսյան

Քանալի բառեր՝ ընտրական գործընթաց, հանրաքվե, ակտիվ ընտրական իրավունք, պասիվ ընտրական իրավունք, ընտրական իրավունքի սկզբունքներ, ընտրական գործընթացի փուլեր:

«Քաղաքացիական ներգրավվածության» և «Մասնակցության» մասին խոսելիս պետք է նշել, որ դրանք հաճախ օգտագործվում են որպես փոխադարձաբար փոխարինելի հասկացություններ, այսինքն՝ գրեթե նույնացվում են: Այս պարագայում կարծում ենք, որ դժվար է հստակ տարանջատում կատարել տվյալ հասկացությունների բովանդակության միջև: Նշենք նաև, որ մի շարք մոտեցումների համաձայն՝ «մասնակցություն» հասկացությունը դիտարկվում է որպես «քաղաքացիական ներգրավվածություն» հասկացության մի մաս, դրա առավել ինտենսիվ և կազմակերպված դրսևորում: Ջարգացման նախաձեռնությունների և դրանց մասը կազմող հայեցակարգերի՝ քաղաքացիական ներգրավվածության և մասնակցության քաղաքականության կենսագործման ընթացքում արդիական է դրանց իրագործելիության և փաստացի դրսևորումների չափման խնդիրը [1]:

Քաղաքացիների ակտիվ մասնակցությունը պետության կառավարմանը է ժողովրդավարության և հզոր քաղաքացիական հասարակության կայացման հիմնական սկզբունքներից մեկն է: Ժողովրդավարությունը մի գաղափար է, որն իրականանում է, երբ քաղաքացիները ակտիվորեն նվիրվում են քաղաքական կյանքին: Ժողովրդավարությունը ժողովրդի կառավարումն է հանուն ժողովրդի և ժողովրդի համար: Ժողովրդավարության առկայությամբ մարդը ծայն ունի իր կյանքի կառավարման գործում: Պետք է նշել, որ քաղաքացիների ներգրավվածությունը քաղաքական կյանքին կախված է կոնկրետ իրավիճակից, քաղաքական համակարգի բնույթից, ինչպես նաև մարդուց: Վերջին հաշվով՝ մարդն ինքն է ստեղծում քաղաքական կեցություն սեփական քաղաքական գործունեության և հասարակության մեջ իր վարվելակերպի միջոցով:

Քաղաքական մասնակցության բնույթի և ուղղվածության վրա էական ազդեցություն ունի հասարակության քաղաքական մշակույթի մակարդակը [2], որն արտացոլվում է ժողովրդավարական արժեքների և ինստիտուտների ընդունման ու ընկալման մեջ: Այստեղից մենք կարող ենք ենթադրել, որ հասարակական գիտակցության մեջ որքան բարձր են ժողովրդավարական արժեքները, այնքան բարձր է քաղաքական մասնակցության աստիճանը: Եվ հակառակը, որքան ցածր է ժողովրդավարական իրավունքների և ազատությունների նշանակության աստիճանը, այնքան բնակչության զգալի մասի մոտ նկատվում է հակակրանք և օտարում քաղաքական կյանքից: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը ամրագրում է, որ «յուրաքանչյուր ոք ունի անմիջականորեն կամ ազատորեն ընտրված ներկայացուցիչների միջոցով իր

* Հոդվածն ընդունվել է 25.01.2018:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնը:

երկրի կառավարմանը մասնակցելու իրավունք: Կառավարության իշխանության հիմքում պետք է լինի ժողովրդի կամքը» [3]: Քաղաքացիների կամքի արտահայտությունը ժողովրդավարության հիմքն է:

Ընտրությունները ժողովրդավարական պետական ներկայացուցչական հաստատությունների կազմավորման կարևոր սկզբունքներից են: Ընտրությունների և ընտրական գործընթացի բնույթով կարելի է պատկերացում կազմել քաղաքական համակարգի և վարչակարգի էության և առանձնահատկությունների մասին: Ընտրությունների հետազոտությունը ենթադրում է մի շարք խնդիրների լուծում՝ կապված ընտրությունների անցկացման սկզբունքների, ազատ և արդար ընտրության չափանիշների, քաղաքական համակարգի այլ տարրերի հետ ընտրական համակարգերի փոխհարաբերության իմացության, արժևորման ու գնահատման հետ: Քաղաքականության սուբյեկտների ընտրական կամքի ձևավորման չափանիշները կարիք են զգում ցիվիլիզարխիկ ընթացակարգերի: Այդ է պատճառով, որ ընտրական և հանրաքվեի իրավունքը հասարակության քաղաքական կյանքին անձանց քաղաքակիրթ մասնակցության և ժողովրդաիշխանության իրականացման կարևորագույն նախապայմաններից է: Այն ենթադրում է քաղաքականության սուբյեկտների ներգրավվածության տարբեր ձևեր, որոնք նպաստում են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ցիվիլիզարխիկ լեգիտիմության հիմքերի ամրապնդմանը: Եթե ժողովրդավարական քաղաքական վարչակարգի պայմաններում ընտրությունները կարևոր դեր են խաղում քաղաքական համակարգի կայունության համար, ապա ոչ ժողովրդավարական համակարգերում ընտրություններն էական տեղ չունեն հասարակության քաղաքական կյանքում: Ժողովրդավարական ավանդույթներ և հաստատություններ ունեցող երկրներում ընտրություններն իսկապես էական դեր են խաղում հասարակության քաղաքական կյանքում: Ընտրությունները լիարժեք կարող են իրականացնել իրենց գործառույթները միայն այն ժամանակ, երբ վերածվում են ժողովրդավարության հիմնարար ինստիտուտի, քաղաքացիների քաղաքական իրավասուբյեկտության իրականացման եղանակի, պետական կարգի սահմանադրական հիմքի: Ընտրական իրավունքի ձևական-իրավաբանական և իրավաքաղաքական տեսանկյունների փոխապայմանավորվածությունը, ըստ Յու. Վեդենեևի, պայմանավորված է նրանով, որ, եթե ընտրությունները քաղաքական ինստիտուտ և գործընթաց են, ապա ընտրական իրավունքը դրանց իրավաբանական համակարգն է [4]:

Ընտրական իրավունքի սկզբունքներն ամրագրված են 1948թ. մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, 1966թ. քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում և այլ փաստաթղթերում: Ընտրական իրավունքի սկզբունքները ներառում են մի քանի կարևոր գաղափարներ, որոնց առկայության դեպքում միայն ընտրությունները ձանաչվում են որպես ազատ, արդար և թափանցիկ: Հենց ազատ և արդար ընտրություններն են ոչ միայն վարչակարգի՝ ժողովրդավարական արժեքներին հավատարմությունը պարզելու փորձություններ, այլև դրանք ընտրողներին կարևորագույն հնարավորություններ են տալիս թուլացնել կամ վերացնել ավտորիտար կառավարության իշխանությունը [5]:

Ընտրություններն անցկացվում են ընտրական իրավունքի իրականացման՝ ազատության և կամավորության սկզբունքների հիման վրա: Ոչ ոք իրավունք չունի պարտադրելու ընտրողին քվեարկելու որևէ թեկնածուի (կուսակցության) օգտին կամ դեմ, ինչպես նաև հարկադրելու ընտրողին մասնակցելու կամ չմասնակցելու ընտրություններին [6]: Համաձայն Ռ. Դալի՝ ընտրության ազատությունը բացառում է բռնությունը: Ընտրության ազատությունը տարբեր թեկնածուների միջև ընտրության իրավունքն ու հնա-

րավորությունն է: Բռնությունը կամ հարկադրանքը ենթադրում է ֆորմալ կամ իրական ընտրության բացակայություն: Այսինքն՝ այլընտրանքները բացակայում են, թույլատրված չեն կամ հոյի են բացասական հետևանքներով [7]: Ազատության չափանիշը ավելի կարևոր է, քանզի նախապայմաններ է ստեղծում ժողովրդավարական ընտրական գործընթացի համար: Առանց քաղաքական ազատությունները սահմանող նորմերի՝ դրանց անկողմնակալ կիրառման խնդիրը դառնում է անհիմաստ: Ազատ ընտրությունները բնութագրում են այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են՝ խոսքի ազատությունը, հավաքների ազատությունը, միավորումների ազատությունը, օրենքի առջև բոլորի հավասարությունը, հանընդհանուր և հավասար ընտրական իրավունքը, ակտիվ ու պասիվ ընտրական իրավունքն իրականացնելու նկատմամբ հետապնդման, սահմանափակման, բռնաճնշման բացակայությունը, քվեարկությանը մասնակցելու հնարավորությունը, սեփական քաղաքական և քաղաքացիական իրավունքների իրականացումը և այլն [8]: Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն: Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից: Լրատվամիջոցների և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է: Պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող անկախ հանրային ռադիոյի և հեռուստատեսության առկայությունը և գործունեությունը [9]: Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ, առանց զենքի հավաքներին ազատորեն մասնակցելու և դրանք կազմակերպելու իրավունք: Բացօթյա տարածքներում կազմակերպվող հավաքներն օրենքով սահմանված դեպքերում անցկացվում են ողջամիտ ժամկետում ներկայացված իրազեկման հիման վրա: Ինքնաբերիկ հավաքների իրականացման համար իրազեկում չի պահանջվում: Հավաքների ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման, հասարակական կարգի պաշտպանության, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով [10]:

Յուրաքանչյուր ոք ունի այլոց հետ ազատորեն միավորվելու, ներառյալ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի հարկադրել անդամագրվելու որևէ մասնավոր միավորման: Միավորումների ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Միավորումների գործունեությունը կարող է կասեցվել կամ արգելվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ միայն դատարանի որոշմամբ [11]:

Ընտրություններից հետո պետք է լինեն օրենքով սահմանված բողոքարկման հնարավորություններ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ընտրությունների արդյունքների վերանայում և կրկնակի քվեարկության իրականացում: Նորմալ, արդար ընտրություններն ապահովում են իշխանության խաղաղ անցումը քաղաքական մի խմբից մյուսին և նպաստում ներկայացուցչական համակարգի ձևավորմանը:

Արդարությունն առաջին հերթին ենթադրում է անաչառություն: Արդարության բացակայությունը անհավասար պայմանների առկայությունն է, կամ հավասարների նկատմամբ տարբեր վերաբերմունքը՝ այսինքն ՁԼՄ-ների, ընտրական հանձնաժողով-

ների և այլ հաստատությունների կողմից թեկնածուների հանդեպ կողմնակալ վերաբերմունքը: Արդարությունը ենթադրում է նաև անխտիր բոլոր թեկնածուների նկատմամբ նորմերի և կանոնների անկողմնակալ կիրառում, ինչպես նաև թեկնածուների միջև ռեսուրսների համեմատաբար հավասարաչափ բաշխում: Ընտրական և հանրաքվեի իրավունքը՝ որպես «փոխհամաձայնության կարևորագույն մեխանիզմ» [12], հնարավորություն է տալիս անձանց և նրանց միավորումներին իրականացնելու իրենց ցիվիլիզաբնիկ կամքը: Այսպիսով՝ իրենց «անմիջական» կամ «միջնորդավորված» մասնակցությունը բերելով քաղաքական որոշումների նախապատրաստման, ընդունման, իրականացման ու վերահսկման փուլերին:

Ժողովրդաիշխանության կարևոր ինստիտուտներից մեկը հանրաքվեն է: Այն ժողովրդի իշխանության իրականացման ուղղակի, անմիջական ձև է: Դրա միջոցով ընդունված որոշումները անբեկանելի են և ենթակա չեն վերանայման այլ օրենսդիր կամ վերահսկիչ մարմինների կողմից:

Հանրաքվեները լինում են տարբեր տեսակի [13]՝

1. Սահմանադրական
2. Համազգային
3. Համապետական

4. Տեղական, երբ լուծվում են տեղական նշանակության հարցեր, օրինակ՝ որևէ համայնքում ծագած որևէ խնդիր:

Ընտրական գործընթացների և ընտրական իրավունքի փոխհարաբերությունների համատեքստում տարբերակվում են՝ «ընտրական իշխանություն», «ընտրական դեմոկրատիա», «սուբյեկտիվ ընտրական իրավունք», «օբյեկտիվ ընտրական իրավունք», «ընտրական իրավունքի բովանդակություն», «ընտրական իրավունքի ձև», «ընտրությունների օբյեկտ», «ընտրությունների սուբյեկտ» և այլ հասկացություններ: Այսպես, օրինակ, «սուբյեկտիվ ընտրական իրավունք» իր մեջ ներառում է երկու իրավական ռեժիմներ, որոնք իրականացվում են ընտրական իրավունքի ակտիվ և պասիվ ձևերով: Ընտրողները, անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, ընտրելու և ընտրվելու իրավունք ունեն [14]: Ընտրական իրավունքի կարևոր սկզբունքներից մեկը համընդհանրության սկզբունքն է, որն ենթադրում է, որ ընտրություններին մասնակցելու իրավունք են ձեռք բերում երկրի բոլոր այն քաղաքացիները, որոնց նկատմամբ օրենսդրական սահմանափակումներ չկան:

Համընդհանուր ընտրական իրավունք ասելով՝ հասկանում ենք տվյալ հանրույթի՝ որոշակի տարիքի հասած քաղաքացիների ակտիվ ընտրական իրավունքի՝ ընտրելու իրավունքի առկայություն: Ակտիվ ընտրական իրավունքը քաղաքացու ընտրելու իրավունքն է: Ակտիվ ընտրական իրավունքի ձեռքբերման համար գործում են մի քանի սահմանափակումներ: Բացառություններ կարող են լինել դատարանի որոշմամբ անգործունակ ձանաչված անձինք, որոշ երկրներում նաև դատարանի որոշմամբ ազատագրված դատապարտված և պատիժը կրող անձինք: Տարբեր ժամանակներում գոյություն են ունեցել գործուն ընտրական իրավունքը սահմանափակող ցենզեր, օրինակ՝ գույքային, կղթական, սեռային, կրոնական և այլն: Սակայն այսօր, որպես կանոն, պահպանվում է միայն տարիքային ցենզը, որը պետությունների մեծ մասում 18 տարեկանն է: Ակտիվ ընտրական իրավունքի ձեռքբերման համար երկար ժամանակ գործել է սեռային ցենզը, որը հիմնականում վերաբերվել է կանանց: Օրինակ՝ գոյություն են ունեցել գույքային, տարիքային, սեռային և կրոնական սահմանափակումներ: Մինչև 19-

որդ դարի կեսերը ընտրություններին հիմնականում մասնակցում էին որոշակի սոցիալական դիրք, ստատուս ունեցող մարդիկ, որոնք ունեին նաև որոշակի գույք: Հիմնավորումը կայանում էր նրանում, որ այդպիսի մարդիկ ավելի շահագրգռված են քաղաքականության մեջ մասնակցություն ունենալ: Սեռային սահմանափակումը վերացել է 20-րդ դարի 20-ական թվականներից: Շվեյցարիայում այն պահպանվում էր մինչև 1983 թ. և միայն դրանից հետո այնտեղ թույլատրվեց կանանց մասնակցությունը ընտրական գործընթացներում:

Առաջին երկիրը, որտեղ բոլոր չափահաս կանայք ընտրելու իրավունք են ստացել Նոր Զելանդիան էր՝ 1893 թ.: Նախքան այդ կանայք ընտրելու սահմանափակ իրավունք ունեին նաև Շվեդիայում, Մեծ Բրիտանիայում, Ֆինլանդիայում և ԱՄՆ որոշ նահանգներում: 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին ստեղծվել են մի շարք միջազգային կազմակերպություններ, որոնք պայքարել են կանանց տղամարդկանց հետ հավասար ընտրական իրավունք ստանալու համար: Այդ պայքարի մասնակիցները կոչվում էին սուֆրաժիստներ: Առաջին համաշխարհային պատերազմից հետո գրեթե բոլոր արևմտյան երկրներում կանայք ընտրական իրավունք ստացան: Բացառություն են կազմել Ֆրանսիան և Շվեյցարիան, որտեղ կանայք ընտրական գործընթացներին մասնակցել կարողացել են համապատասխանաբար 1944 և 1979 թթ.: Ներկայումս կանայք ընտրելու իրավունք ունեն գրեթե բոլոր երկրներում: Հայաստանում կանայք ընտրական կանայք իրավունք ունեն 1921-ից: Շատ երկրներում գործում է նաև բարոյականության ցենզը, որոշ երկրներում թմրամոլները, մայրությունից զրկված կանայք կամ դատարանի կողմից ազատազրկման դատապարտված մարդիկ իրավունք չունեն մասնակցել ընտրական գործընթացներին: Ներկա պայմաններում ակտիվ ընտրական իրավունքի հիմնական սահմանափակումը տարիքային ցենզն է: Որոշակիորեն բարձր տարիքային ցենզ սահմանվում է պասիվ ընտրական իրավունքի՝ ընտրվելու իրավունքի համար: Մեր օրերում օգտագործվող ցենզերից մեկը տվյալ տարածքում որոշակի ժամանակ բնակության ժամկետի ցենզն է [15]: Որպես կանոն, այս դեպքում սահմանվում է ավելի բարձր տարիքային շեմ: Իսկ ինչ վերաբերում է օբյեկտիվ ընտրական իրավունքին, ապա այն «սուբյեկտիվ ընտրական իրավունքի աղբյուրն է և իր մեջ ներառում է իրավաբանական նորմերի ամբողջությունը, որոնք սահմանում են ընտրական գործընթացի մասնակիցների իրավունքները, պարտականություններն ու պատասխանատվությունը» [16]:

Հավասար ընտրական իրավունքը ենթադրում է յուրաքանչյուր ընտրողի՝ ընտրությունների արդյունքների վրա ազդելու հավասար հնարավորություն: Հավասարությունը ապահովվում է «մեկ ընտրող, մեկ ձայն» սկզբունքով: Սույն սկզբունքի պահպանումն ապահովում է, որ յուրաքանչյուր քվե ունենա հավասար կշիռ և ազդեցություն, ինչպես նաև ընտրատեղամասերի այնպիսի բաժանում, որ յուրաքանչյուրում լինեն մոտավորապես հավասար թվով ընտրողներ:

Ուղղակի ընտրական իրավունքը նշանակում է քաղաքացու՝ անմիջականորեն ընտրելու կամ ընտրվելու իրավունք: Ազգային ժողովը, տեղական ինքնակառավարման մարմինները, բացառությամբ Երևան, Գյումրի, Վանաձոր համայնքների ղեկավարների, ընտրվում են անմիջականորեն՝ ընտրողների կողմից [17]:

Քվեարկությունը գաղտնի է: Ընտրողի համար քվեարկության գաղտնիությունը ոչ միայն իրավունք է, այլև պարտականություն: Գաղտնի ընտրությունը ենթադրում է քաղաքացիների կամարտահայտության վրա կողմնակի հսկողության բացառում: Այս սկզբունքի պահպանումն ապահովում է քաղաքացու ազատ կամարտահայտության սկզբունքը և քաղաքացին իր ընտրության մեջ կաշկանդված չի լինում որևիցե այլ հանգամանքով:

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

Ընտրական գործընթացում նշվում են հետևյալ հիմնական փուլերը [18].

1. Ընտրությունների նշանակում.

2. Ընտրատարածքների և ընտրատեղամասերի սահմանում:

Ընտրական տեղամասերը կազմավորում են քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 45 օր առաջ՝ հաշվի առնելով տեղական և այլ պայմաններ, նպատակ ունենալով առավել նպաստավոր պայմաններ ստեղծել քվեարկության համար: Քվեարկությունն անցկացնում է տեղամասային կենտրոնում՝ դրա համար կահավորված դահլիճում, սրահում, սենյակում և այլ տարածքում (այսուհետ՝ քվեարկության սենյակ): Քվեարկության սենյակի համար պատասխանատու է համայնքի ղեկավարը [19]:

3. Ընտրական հանձնաժողովների ձևավորում:

Ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով կազմավորվում է ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգ՝

Կենտրոնական ընտրական հանձնաժողով,

Տարածքային ընտրական հանձնաժողովներ,

Տեղամասային ընտրական հանձնաժողովներ,

Ընտրական հանձնաժողովներն իրենց գործունեությունն իրականացնելիս անկախ են: Նրանց գործունեությանը որևէ միջամտություն արգելվում է: Նրանք իրենց լիազորությունները իրականացնում են օրինականության, կոլեգիալության և հրապարակայնության սկզբունքների հիման վրա, ինչպես նաև ապահովում են ընտրողների ընտրական իրավունքի իրականացումը և պաշտպանությունը [20]:

4. Ընտրողների գրանցում:

Այս գործընթացը ՀՀ-ում հիմնականում իրականացնում են ոստիկանության անձնագրային բաժանմունքը: Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրի հիման վրա կազմվում է համայնքի ընտրողների ցուցակ՝ ըստ ընտրական տեղամասերի, որում ընդգրկվում են սույն օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ համապատասխան ընտրության ժամանակ ընտրելու իրավունք ունեցող անձինք:

Յուրաքանչյուր ընտրության դեպքում ընտրողը կարող է ընդգրկվել ընտրողների միայն մեկ ցուցակում և միայն մեկ անգամ [21]: Ընտրողների ցուցակները կազմվում են ըստ ընտրողների հաշվառման վայրի հասցեների: Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ տեղամասի ընտրողների ցուցակում համարակալման շարունակականությամբ, ըստ առանձին բաժինների ներառվում են նաև ըստ գտնվելու վայրի ընտրողների, հաշվառում չունեցող ընտրողների, ընտրական տեղամասեր գործուղվող ոստիկանության ծառայողների ցուցակները [22]:

5. Թեկնածուների առաջադրում:

Թեկնածուները կարող են ինքնառաջադրվել, կարող են առաջադրվել քաղաքացիական նախաձեռնության կողմից, ինչպես նաև քաղաքական կուսակցությունների և դաշինքների կողմից: Թեկնածուների առաջադրումից հետո սկսվում է նախընտրական քարոզչության փուլը:

6. Նախընտրական քարոզչություն:

Նախընտրական քարոզչության ժամանակաշրջանը սկսվում է ընտրությունների նախնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների, թեկնածուների գրանցման համար օրենսգրքով սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող 7-րդ օրը և ավարտվում քվեարկության օրվանից մեկ օր առաջ: Քվեարկության և դրան նախորդող օրը քարոզչությունը հրապարակային ելույթների, հրապարակային միջոցառումների, ինչպես նաև տպագիր մամուլի, վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

ռադիոընկերությունների և հեռուստաընկերությունների (այդ թվում՝ արբանյակային հեռարձակման ժամանակ) արգելվում է:

Ընտրական հանձնաժողովի անդամներին արգելվում է նախընտրական քարոզչություն կատարել և ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածել [23]:

7. Քվեարկություն:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը քվեարկության օրը՝ ժամը 8.00-ին, հայտարարում է քվեարկության սկիզբը և թույլատրում ընտրողների մուտքը քվեարկության սենյակ: Հանձնաժողովի նախագահը կազմակերպում և վերահսկում է քվեարկության անցկացումը, անհրաժեշտության դեպքում օժանդակում գործառույթ իրականացնող անդամներին, փոխարինում նրանց և մասնագետին ժամանակավոր բացակայության դեպքում: Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ հանձնաժողովի քարտուղարը գրառումներ է կատարում գրանցամատյանում, օժանդակում գործառույթ իրականացնող անդամներին, փոխարինում նրանց և մասնագետին ժամանակավոր բացակայության դեպքում: Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ այդ պահին գործառույթ չիրականացնող հանձնաժողովի անդամը փոխարինում է մասնագետին ժամանակավոր բացակայության դեպքում:

Արգելվում է տեղամասային կենտրոն գեներ, զինամթերքով մուտք գործելը:

Ձինժառայողները, ազգային անվտանգության և ոստիկանության զորքերում ծառայողները տեղամասային կենտրոն մուտք են գործում ոչ շարային կարգով՝ առանց զենքի, զինամթերքի: Քվեարկության բնականոն ընթացքի վտանգման դեպքում տեղամասային կենտրոն գեներով մուտք գործել կարող են միայն ոստիկանության ծառայողները՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի թույլտվությամբ:

Եթե քվեարկության սենյակում գտնվող ընտրողների թիվն այնքան է, որ ակնհայտորեն խաթարվում է քվեարկության բնականոն ընթացքը, ապա ընտրական հանձնաժողովի նախագահն իրավունք ունի սահմանափակելու քվեարկության սենյակում միաժամանակ գտնվող ընտրողների թիվը, բայց ոչ պակաս, քան 15 ընտրող՝ ընտրողներին քվեարկության սենյակ թողնելով հերթով՝ մեկ-մեկ: Ընտրական հանձնաժողովի կողմից սույն մասի կատարումն ապահովելու անհնարինության դեպքում ընտրական հանձնաժողովի նախագահի պահանջով այն իրականացվում է ոստիկանության օժանդակությամբ: Քվեարկության սենյակում իրավունք ունի միաժամանակ ներկա գտնվել յուրաքանչյուր զանգվածային լրատվության միջոցը ներկայացնող մեկ լրագրող և մեկ լուսանկարիչ կամ տեսաձայնագրման մեկ օպերատոր:

8. Ձայների հաշվարկում և արդյունքների ամփոփում:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը քվեարկության օրը՝ ժամը 20.00-ին, հայտարարում է քվեարկության ավարտի մասին և արգելում ընտրողների մուտքը քվեարկության սենյակ: Հանձնաժողովը քվեարկության սենյակում գտնվող ընտրողներին քվեարկելու հնարավորություն է տալիս, որից հետո հանձնաժողովի նախագահը փակում է քվեատուփի ձեղքը: Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը պարկը, ընտրողների ցուցակների փաթեթը, չօգտագործված քվեարկության ծրարների փաթեթը, չօգտագործված քվեաթերթիկները, քվեարկության արդյունքների արձանագրության երկու օրինակը, գրանցամատյանը, հանձնաժողովի կնիքը, տեխնիկական սարքավորումը քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 14 ժամվա ընթացքում ներկայացնում են տարածքային ընտրական հանձնաժողով՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով:

9. Արդյունքների վերջնական ամփոփում և պաշտոնական հրապարակում:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը քվեարկության օրվանից հետո՝ 7-րդ օրը, հիմք ընդունելով քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը, դատարանի վճիռները, հանձնաժողովներում ստացված դիմումների (բողոքների) քննարկման արդյունքով ընդունած որոշումները, տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումների վերաբերյալ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների որոշումները, քվեարկության արդյունքների վերաբերյալ ընդունած որոշումները ամփոփում է ընտրության արդյունքները և ընդունում որոշում ընտրությունների արդյունքների վերաբերյալ [24]:

Ընտրական գործընթացի կազմակերպումը, հիմնվելով ընտրական իրավունքի սահմանադրական սկզբունքների ընդունման և կիրառելիության վրա, ժողովրդավարական հասարակարգի կայացման կարևորագույն նախադրյալներից մեկն է: Առանց ընտրության արդարացի կազմակերպման՝ տվյալ հասարակության զարգացումը հնարավոր չէ իրականացնել, քանի որ ընտրությունների միջոցով է ձևավորվում երկրի կառավարման համակարգը: Հարկավոր է ընտրական գործընթացների մասնակցության մեջ բարձրացնել քաղաքացիների գիտակցության մակարդակը և թույլ չտալ, որ ցածր գիտակցությունը հանգեցնի կենտրոնացված իշխանության ձևավորմանը: Միայն այդ դեպքում կարող ենք պայքարել հասարակության մեջ արմատացած ընտրակեղծիքների և ընտրախախտումների դեմ, որոնք ավելի են խորացնում կոռուպցիոն ռիսկերը, կաշառակերությունը, անհատի իրավունքների և ազատությունների սահմանափակումը, զանազան հարցումների ցածր ցուցանիշները տվյալ հասարակությունում: Ազատ և արդար ընտրություններ անցկացնելու միջոցով քաղաքական իշխանություն մուտք կգործեն կրթված և մասնագիտական պատրաստություն ունեցող ավելի մեծ թվով անհատներ:

Ընդհանրապես կոռուպցիոն ռիսկերը սողոսկում և քայքայում են հասարակական-քաղաքական կյանքի յուրաքանչյուր ոլորտ՝ սոցիալական, քաղաքական, մշակութային, ռազմական, և այդ ամենից գերծ մնալու համար մենք պետք է իսպառ վերացնենք արքենտիզմն ի հայտ բերող տարրերը, որի արդյունքում հասարակական-քաղաքական կյանքում քաղաքական ապատիան գերիշխող դիրք է զբաղեցնում: Քաղաքական ապատիան հանգեցնում է քաղաքացիների օտարումը քաղաքական կյանքից, հիասթափությանը և անվստահությանը քաղաքական ինստիտուտների և իշխանության նկատմամբ: Հարկավոր է բարձրացնել քաղաքացիների ձեռնհասության մակարդակը, վերականգնել իրենց համար ցանկալի արդյունքի հասնելու հավատը: Իսկ հավատի կորստի և անվստահության մեխանիզմի առաջացմանը նպաստում են քաղաքականությունը կերտողների կեղծ խոստումները, որն էլ իր հերթին հանգեցնում է քաղաքացիների համար ընտրությունների արդյունքների ցածր նշանակությանը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Քաղաքացիական ներգրավվածության և մասնակցության ինստիտուցիոնալացման հեռանկարները զարգացման ծրագրերի համատեքստում (հայաստանյան փորձի վերլուծություն), Եր., 2008:
2. Շափաղաթյան Հ., Քաղաքական մասնակցության արդի հիմնախնդիրները, ԵՐ., 2007, էջ 46:
3. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, 10.12.1948 թ., հոդված 21:
4. Ալեքսանյան Ա., Ցիվիլիարխիկ դեմոկրատիա, Եր., 2005, էջ 69-70:
5. Nevitte. N and Canton S., The Role of Domestic Observers Journal of Democracy, 1997, p. 47- 61.

6. ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 4, 25.05.2016
7. «Քաղաքագիտություն», ուս. ձեռնարկ ՀՀ բուհերի համար, ԵՐ., 2006, էջ 502:
8. Նույն տեղում, էջ 502-503:
9. ՀՀ սահմանադրություն, 06.12.2005, հոդված 27:
10. ՀՀ սահմանադրություն, (փոփոխություններ 06.12.2015), հոդված 44:
11. Նույն տեղում, հոդված 45:
12. Ալեքսանյան Ա., նշվ. աշխ., էջ 68-69:
13. Աբրահամյան Հ., Ժողովրդավարությունը և քաղաքական կուսակցությունները: Ուս. ձեռնարկ, ԵՐ., 2009, էջ 40:
14. ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 3, 3-րդ կետ, 25.05.2016:
15. «Քաղաքագիտություն», էջ 491-492:
16. Ալեքսանյան Ա., նշվ. աշխ., էջ 69:
17. ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 5, 25.05.2016:
18. «Քաղաքագիտություն», էջ 492:
19. Ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացների ուսումնական ձեռնարկ, էջ 10: տե՛ս <http://res.elections.am/images/doc/TEC-guide2016.pdf> հասանելի՝ 20.11.2017:
20. Նույն տեղում, էջ 10:
21. ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 10, 1-ին և 2-րդ կետեր, 25.05.2016:
22. ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 11, 1-ին կետ, 25.05.2016:
23. Ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացների ուսումնական ձեռնարկ, էջ 9-10:
24. ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 75, 6-րդ կետ, 25.05.2016:

ԱՄՓՈՓԱԳԻՐ
Ընտրական գործընթացին ներգրավվումը՝
որպես քաղաքական մասնակցության տարատեսակ
(ՀՀ օրինակով)
Առնակ Սարգսյան

Ընտրությունների և ընտրական գործընթացի բնույթով կարելի է պատկերացում կազմել քաղաքական համակարգի ու վարչակարգի էության և առանձնահատկությունների մասին: Տվյալ հասարակության զարգացումը հնարավոր չէ իրականացնել՝ առանց ընտրության արդարացի կազմակերպման, քանի որ ընտրությունների միջոցով է ձևավորվում երկրի կառավարման համակարգը: Հարկավոր է ընտրական գործընթացների մասնակցության մեջ բարձրացնել քաղաքացիների գիտակցության մակարդակը և թույլ չտալ, որ ցածր գիտակցությունը հանգեցնի կենտրոնացված իշխանության ձևավորմանը: Ընտրություններն անցկացվում են ընտրական իրավունքի իրականացման՝ ազատության և կամավորության սկզբունքների հիման վրա: Ոչ ոք իրավունք չունի պարտադրելու ընտրողին քվեարկել որևէ թեկնածուի (կուսակցության) օգտին կամ դեմ, ինչպես նաև հարկադրելու ընտրողին մասնակցել կամ չմասնակցել ընտրություններին:

Ազատ և արդար ընտրություններ անցկացնելու միջոցով քաղաքական իշխանություն մուտք կգործեն կրթված և մասնագիտական պատրաստություն ունեցող ավելի մեծ թվով անհատներ:

РЕЗЮМЕ

Вовлечение в избирательный процесс как тип политического участия
(на примере РА)
Арнак Саргсян

Ключевые слова: избирательный процесс, референдум, активное избирательное право, пассивное избирательное право, принципы избирательного права, этапы избирательного процесса.

Принимая во внимание характер выборов и избирательного процесса, можно опираться на сущность и особенности политической системы и режима. Без справедливой организации выборов развитие этого общества невозможно, потому что система управления страной формируется путем выборов. Необходимо повысить уровень сознательности граждан в избирательном процессе и предотвратить низкую осведомленность о формировании централизованной власти. Выборы проводятся на основе осуществления права голоса, свободы и добровольчества. Никто не имеет право налагать голосование на или против какого-либо кандидата (партии), а также заставлять избирателей участвовать или не участвовать на выборах.

Проводя свободные и справедливые выборы, все более образованные и профессионально подготовленные лица войдут в политическую власть.

SUMMARY

The electoral process involvement as a type of the political participation
(on the example of the RA)
Arnak Sargsyan

Keywords: electoral process, referendum, active electoral right, passive electoral right, principles of electoral right, stages of electoral process.

In terms of the nature of the elections and the electoral process we can draw on the essence and peculiarities of the political system and the regime. Without the fair organization of the elections the society cannot develop as the governance system of a country is formed through elections. It is necessary to increase the level of citizens' consciousness in the electoral process and prevent the low awareness of the formation of a centralized government. Elections are held on the basis of the realization of the right to vote, freedom and volunteerism. No one has the right to compel the voter to vote for or against any candidate (party), or compel voters whether to participate or not in elections.

By holding free and fair elections, more and more educated and professionally trained individuals will enter the political power.